† ՄԱՀԳՈՅԺ

ՕՐ. ԱՆՆԱ ԵԶԵԱՆ

Անցեալ հոկտեմբեր ամսին վախճանուեցաւ Պ. Բուրգում օր. Աննա Եզեանը, լալտնի պ. Կարապետ Եզեանի քոյրը։

Հանգուցեալի մահը զգալի կորուստ է մեզ համար, որովհետև նա գործօն դեր էր կատարում մեր որբերի խնամատարութեան գործի մէջ։ Օրիորդ Աննան, ինչպէս ասում է Կ. Պոլսի «Բիւզանդիոն» լրագիրը, 1897 թուից սկսած մի որբանոց էր պահում Կարմիր վանքում, ուր որդեգրել էր 50 որբ, որոնց պահպանութեան համար տարեկան վճարում էր մօտ 2200 ռուբլի (250 ոսկի) որբանոցի խնամակալութեան։ Նորա նախաձեռնութեամբ կազմակերպուել է Պ. Բուրգում տիկնանց մի խնամակալութիւն՝ հսկելու այդ որբանոցի բարեկամանց և նիւթականը հոգալու, թէ իւր անձնականից և թէ հանգանակութեամբ։ Նորա գործունէութեան շնորհիւ այժմ պատրաստ կայ այդ նպատակի համար մօտ 4000 ռուբլի, որ բաւական է դեռ էլի երկու տարի պահպանելու այդ որբանոցը։

Հանգուցեալի եղբայրը Պ. Կ. Եզեանց իւր քրոջ մահուան աւթիւ նուիրել է այդ որբանոցին 500 ռուբլի։

Յաւիտենական հանգիստ հանգուցեալի աճիւններին։